

խիայի սահմաններում (Չեխիայում, Մորաւիայում և Սիլեզիայում), նաև չեխական լեզուի հաւասարադրութիւն կառաւարդութեան դործում, դպրոցում և հասարակական կեանքում: 2) Տնտեսական, կուլտուրական և ընկերվարական զարգացումն չեխ ժողովրդի՝ նրա ինքնավարութեան հիման վրայ: 3) Պաշտպանութիւն չեխ ժողովրդի նորագոյն մշակած միջոցներով այն վայրերում, որտեղ նա փոքրամասնութիւն է կազմում: 4) Ճշմարիտ և անկողմնակալ տեղեկութիւններ չեխ ժողովրդի մասին արտասահմանում և այդ նպատակաւ լրագրական յատուկ բւերօրի պահպանութիւն, որը պէտք է կանոնաւոր յարաբերութիւն պահպանի արտասահմանի մամուլի հետ:

Չեխական ժողովրդական խորհրդի յատուկ եկամուտը ստացւում է «ժողովրդական կնիք» դործածելուց, որը մտցւում է ռուսական Կարմիր Սաշի նշանի նման, բայց առաւել ընդարձակ դործածութիւն է ստանում Չեխիայում: Չեխական խորհուրդը տպւում է զանազան դնի մարկաներ և դործադրութեան մտցնում հասարակական կեանքի բազմաթիւ դէպքերում: Նրանք կը փակցուին բոլոր ընկերութեանց հաշիւներին, ամեն տեսակ ներկայացումներին տոմսակիւններին, լրագրական յայտարարութիւններին, արեւտրական վկայականներին վրայ և այլն: Ժողովրդական այդ կամաւոր տուրքից ստացուած գումարը խորհրդի կողմից կը բաշխուի բոլոր ազգային հիմնարկութեանց, որոնց գլուխն է կանգնած «Գլխորոցական Մատիցան»: Կարծիք չկայ, որ շնորհիւ չեխական խիստ կարգապահութեան՝ նոր տուրքը ամենայն կանոնաւորութեամբ կը մանի խորհրդի գանձարանը: Գործին գլուխ է կանգնած գօքտոր Հերօլդը, որին և պատկանում է «Չեխական խորհրդի» կազմակերպութեան նախաձեռնութիւնը:

Գերմանական սոցիալ-դեմոկրատներ (բանուոր-ընկերվարական) ժողովը նկայում:

Церк. Вѣстник-ի № 39-ում կարդում ենք.

Գերմանիայի հասարակական կեանքի նշանաւոր երեւոյթ պէտք է համարել սեպտեմբերի 17—23 տեղի ունեցած գերմանական սոցիալ դեմոկրատներին՝ համաժողովը, որոնք իրենց ուժով երկրորդ տեղ են բռնում Բայխատագում, ունին երեք միլիօն ընտրողներ և անբող դիրք են գրաւում միջազգային ընկերվարական կազմակերպութեան մէջ: Ուստի և հասկանալի է

այն հետաքրքրութիւնը, որով մամուլն ու հասարակութիւնը հետեւում էին այդ կուսակցութեան ներկայացուցիչներին խորհուրդներին, որոնք հանդէս են դալիս վճռելու բանւորական ամենահրատապ խնդիրը— ժամանակակից քաղաքական կազմի արմատական յեղափոխութեամբ՝ համաձայն նիւթապաշտական աշխարհահայեցողութեան։ Այդպիսի շարժման ելքն ինքնըստինքեան պէտք է հետաքրքրէր ոչ միայն քաղաքական այլ և եկեղեցական շրջաններ։ Հակառակորդներն՝ ի նկատի ունենալով Գրեղդէնի համաժողովի ժամանակ պատահածները, ներկայումս էլ սպասում էին, որ աւելի մեծ բաժանումն և նոյն իսկ կազմալուծումն առաջ կը գայ։ Սակայն ղեկավարներն ամեն միջոց գործ դրեցին, որ նախկին սխալները չը կրկնուին և աշխատեցին հանդէս դալ իրենց վրայ նայող ամբողջ աշխարհի առաջ, և ինչպէս նկատեց նախագահ Ջէնզերը, որպէս բոլոր էական կէտերում համաձայն մի կուսակցութիւն, պատրաստ կռուելու նորից դուռն բարձրացնող րէակցիայի (յետադիմութեան) դէմ։ Նա էին հաւաքուել Գերմանիայից և արտասահմանից 350 պատգամաւորներ։

Համաժողովի ծրագրի առաջին տեղն էր զբաւում կուսակցութեան նոր կազմակերպութեան խնդիրը և նրան աւելի համախմբելու և կեդրոնացնելու համար՝ տեղական կազմակերպութիւնների կողմից կեդրոնի գանձարանի կանոնաւոր վճարներ տալու անհրաժեշտութիւնը։ Այնուհետև մեծ ժամանակ և ուշադրութիւն դրաւ երկու խնդիրների քննութիւնը, որոնք նշանաւոր դեր են խաղում սօցիալ—դէմոկրատիայի կեանքում։

- 1) մայիսի մէկի տօնախմբութիւնը և քաղաքական ընդհանուր գործադուլը՝ նրա հետ սերտ կապուած բանւորական երկու կազմակերպութիւնների—քաղաքական (սօցիալ—դէմոկրատիա և պրօֆէսիօնալ) բանւորական միութիւնների փոխադարձ յարաբերութեան խնդիրը։ Ինչպէս որ Կեօլնի համաժողովի ժամանակ պարզուեց, Պրօֆէսիօնալ բանւորական միութիւնները՝ ցանկանալով բարեօքել աշխատանքի պայմանները և բարձրացնել օրավարձը, շատ էլ ուշադրութիւն չեն դարձնում մայիսի մէկի և քաղաքական գործադուլի վրայ, որը նրանց ահագին նիւթական փնաս է հասցնում։ Ընդհակառակն՝ սօցիալ դէմոկրատիան, որ նպատակ է դրել ձեռք բերել քաղաքական տիրող դրութիւն աշխատաւոր դասակարգի համար, որը միայն ընդունակ է աշխատանքի լաւագոյն պայմաններ ստեղծելու, յիշեալ միջոցներին՝ որպէս կռուի միջոցներ, շատ մեծ նշանակութիւն է տալիս։ Պրօֆէսիօնալ բանւորներին նա մեղադրեց, որ նրանք

ողգեորութիւնից և գաղափարականութիւնից զուրկ են, մերձաւոր շահերով են յափշտակուած և միանգամայն անհեռատես են: Թէ և տարբեր կարծիքներ յայտնեցին ժողովի ժամանակ, այնուամենայնիւ լճիւղը կայացաւ յօգուտ սօցիալ-դէմոկրատներին ծրագրի: Ընդունուեց մայիսի 1-ը որպէս ընդհանուր հանգիստ աշխատանքներից և լաւագոյն միջոց բանւորներին դասակարգային պահանջներին և կռուի. և ըստ բանւորների ու բանւորական կազմակերպութիւնների վրայ պարտք դրուեց դադարեցնել աշխատանքները և տօնել այդ օրը: Չայների ահագին մեծամասնութեամբ ընդունուեց նաև Բէքելի առաջարկութիւնը քաղաքական գործադուլների մասին: Բանւորների իրաւունքներին դէմ ոտնձգութիւններ անելու, նրանց ընդհանուր, անմիջական, դադարի ձայնատուութեան իրաւունքի համար և աշխատութիւններ կաղմելու դէմ որ և է ոտնձգութեան դէպքում՝ պաշտպանուելու ամենագործնական միջոց ընդունուեց ընդհանուր գործադուլը: Բանւորական երկու կազմակերպութիւններն էլ հրաւիրուած են միանալ սերտ կերպով և իրար պաշտպանել: Համաժողովի ժամանակ քննութեան առնուեց նաև ընկերւորական գաղափարներ քարոզելու խնդիրը՝ մանաւանդ երիտասարդութեան մէջ. որոշուեց ներշնչել ապագայ զինուորներին իրենց իրաւունքների գիտակցութիւնը և զգուանք դէպի մելիտարիզմը (զինապաշտութիւն): Համաժողովը լճիւղ կայացրեց, որով դատապարտում է կառավարութեան հողատէրերին (ազրարներին) պաշտպանելու քաղաքականութիւնը և որոշեց Բէյխստադին ծրագիր առաջարկել եկեղեցին պետութիւնից բաժանելու:

— Ընթերցողներն ինչպէս գիտեն, քաղաքական ընդհանուր գործադուլը ամենայն յաջողութեամբ գործադուրուեց Ռուսաստանում հոկտեմբերի 15-ից, տուաւ սքանչելի հետեւանքներ և զարմացրեց ամբողջ եւրոպային: Սա մի պետութեան մէջ կատարուած քաղաքական գործադուլ էր: Ինչպէս յայտնի է, բանւորական կազմակերպութիւնը և նրա ծրագիրը միջազգային է և հետեւապէս հնարաւորութիւն ունի միջազգային քաղաքական գործադուլներ կազմակերպելու: Արդեօք Հաագայի անյաջող վեհաժողովի դերը, գործող անձինք և գործունէութեան արդիւնքն այսուհետեւ ընդորովին չէ՞ն փոխուած շնորհիւ միջազգային քաղաքական գործադուլներին: